ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԸ
ՀԱՅՆՐԻԽ ՖԻՐԲՅՈՒԽԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՄԱՄԲ

ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Հազիվ թե օտարազգի մեկ ուրիշ հեղինակ 1915 թվականի հայոց ցեղասպանության անցքերը այնպես համակողմանի, և որ գլխավորն է, ճշմարիտ ու համապարփակ վերլուծած լինի, ինչպես Հ. Ֆիրբյուխերը (1893-1939): Ասածը մանավանդ վերաբերում է երիտթուրքերին, պանգերմանիստներին և կայզերական կառավարությանը հասցեագրած նրա հատու, ջախջախիչ և անվիճահարույց մեղադրանքներին հիմնված պացիֆիստ-հրապարակախոս գործչի անառարկելի փաստարկումների և ականատեսի անժխտելի վկայությունների վրա: Հայոց ցեղասպանության կազմակերպիչներին և իրականացնողներին ուղղված Հ. Ֆիրբյուխերի մերկացումները արտացոլում են գտել ամբողջ արևմտաեվրոպական հանրությանը հայտնի նրա խաղաղասիրական ելույթներում, 1920-1930-ական թթ. հրապարակած հոդվածներում՝ և հատկապես 1930 թ. լույս տեսած նրա «Հայաստան 1915» գրքում[2], որը Գերմանիայում ունեցավ ևս երկու հրատարակություն (1985 և 1987 թթ.):

Հ. Ֆիրբյուխերի թե՛ բանավոր և թե՛ գրավոր քննադատության գլխավոր զենքը փաստերի և եզրակացությունների վավերականությունն է ու նաև՝ նրա որդեգրած քաղաքական ուղղվածությունը՝ որպես Արևմտյան Եվրոպայում խաղաղության համար մարտնչողների պարագլուխներից մեկի և մանկուց սոցիալ-դեմոկրատ բանվորի ընտանիքում դաստիարակված անձնավորության: Բնածին հռետոր և խաղաղության պայքարի առաջամարտիկ Հ. Ֆիրբյուխերը չէր կարող անցնել մի ամբողջ ժողովրդի ոչնչացման կողքով, չբացահայտել մարդկության պատմության մեջ, Ռոհրբախի խոսքերով ասած, «ամենամեծ կազմակերպված մարդասպանության» պատճառներն ու մեղավոր-

---

1 *Օրինակ՝ նրա «Արևելքի զոհերը» հոդվածում (*Vorwarts, 1920*).*

2 Heinrich Vierbücher. Armenien 1915. Was die kaiserliche Regierung den deutschen Untertaten verschweigen hat. Die Abschlachtung eines kulturvolkes durch die Türken. Donat Temmen Verlag, Bremen, 1987. *Հ. Ֆիրբյուխերի գիրքը 1991 թ. Երևանում հրատարակել ենք ռուսերեն:*

ներին: Մի բան ակներև է. հայկական մղձավանջային իրադարձությունների ականատես և խաղաղության մարտիկ Հ. Ֆիրբյուխերը իր սրբազան պարտքն է համարել համաշխարհային հանրությանը իրազեկել իր տեսած ու վերապրած այդ իրադարձությունների մասին: Դա նաև գործողության ուղեցույց էր, որ թելադրվում էր խաղաղության համար պայքարի հրատապ պահանջներով. Թուրք հայասպանների մերկացումը պիտի օգներ կանխելու գալիք պատերազմի արհավիրքը:

1915 թ. դառնալով Թուրքիայում իր ռազմակայանը հիմնած գեներալ Լիման ֆոն Զանդերսի թարգմանիչ ու համհարզը, Հ. Ֆիրբյուխերը ճակատագրի բերումով դարձավ հայկական ողբերգության ականատեսը. թարգմանչի պաշտոնը ստիպում էր 1915-1918 թթ. հայտնվել Թուրքիայի տարբեր շրջաններում և անկյուններում, սեփական աչքերով տեսնել հայոց ողջակիզումը և բռնագաղթեցումը:

Մինչև Հ. Ֆիրբյուխերը շատ քչերն էին այնպես բացահայտ ու փաստարկված մերկացնում մեծ տերությունների նենգ և հանցագործ քաղաքականությունը հայոց եղեռնի հարցում, ինչպես նա: Եվ դա հասկանալի է: Հակաֆաշիստ, ամեն տեսակի չարիքի հակառակորդ Հ. Ֆիրբյուխերին օտար էին նացիոնալիստական սահմանափակումներն ու պանդերմանական-կայզերական հավակնությունները, որոնցից Գերմանիայում չխուսափեցին անգամ դեմոկրատական թևի այնպիսի գործիչներ, որպիսիք էին Նաումանը, Էկխը, Ռոհրբախը և այլք: Հետագայում Հ. Ֆիրբյուխերն ինքը դարձավ ֆաշիստական հետապնդման զոհ:

Հ. Ֆիրբյուխերի դատավճիռը հատկապես անողոք է Օսմանյան կայսրության կառավարողների, երիտթուրքերի և կայզերական Գերմանիայի կառավարության նկատմամբ. երիտթուրքերը՝ հայոց ցեղասպանության անմիջական կազմակերպիչները և իրականացնողներն են, իսկ Գերմանիայի կայզերական կառավարությունը նրանց հանցակիցն է ու դրդակիցը: Հ. Ֆիրբյուխերը իր այդ դատավճիռը հիմնում է անվիճելի ապացույցների վրա, որոնք ենթակա չեն առարկության: Հ. Ֆիրբյուխերի այս դատավճիռը միաժամանակ լուրջ ապտակ է հայոց ցեղասպանության պատմության արդի թուրք կեղծարարների և Արևմուտքում նրանց գրչակների հասցեին, որոնք այսօր էլ ապարդյուն ճիգեր են թափում հայոց ցեղասպանության մեղքը բարդել հենց իրենց՝ հայերի վրա, կամ էլ՝ ժխտել հայ ժողովրդի ցեղասպանության բուն փաստն իսկ Թուրքիայում: Այս վայ-պատմաբանների և հրապարակախոսների համար դժվար է համախմբվել Հ. Ֆիրբյուխերի քննադատության դեմ. չէ՞ որ Հ. Ֆիրբյուխերը իրադարձությունների սոսկ ականատեսը չէր, այլ նաև՝ գեներալ Լիման ֆոն Զանդերսի՝ 1913-1918 թթ. Թուրքիայում գերմանական զինվորական միսիայի գլխավորի, իսկ 1915-1916 թթ. թուրքական 5-րդ բանակի, այնուհետև՝ 1917-1918 թթ. Պաղեստինում թուրքական զորախմբի հրամանատարի համհարզը և թարգմանիչը: Խոսք ու միջոց չգտնելով առարկելու Հ. Ֆիրբյուխերին, կեղծարարները թե՛ այն օրերին և թե՛ այսօր ստիպված են շրջանցել, «չնկատել» նրա մերկացումները:

Այնինչ Հ. Ֆիրբյուխերը քաջ իրազեկ էր թե՛ ֆոն Զանդերսի և թե՛ գերմանական ու թուրքական մյուս զինվորական ու քաղաքացիական անձանց գործերին, ինչպիսին էր, օրինակ, գերմանական մարշալ ֆոն դեր Հոլցը՝ «թուրքական բանակի հայրը»: Հ. Ֆիրբյուխերի վկայությամբ, նույնիսկ Հոլցը չէր դիմացել հայոց կոտորածի սարսափելի տեսարանի առջև և 1915 թ. նոյեմբերի 22-ին Հալեպից հայտնել էր Բեռլին. «Հաջորդ առավոտյան անցանք գլխավոր թունելը և դուրս եկանք Հյուսիսսիրիական ցածրություն: Այստեղ մեր հայացքին ներկայացավ սքանչելի մի տեսարան՝ փախստական հայերը, տեղավորվելով Տավրոսի հարավային ստորոտին, գտնվում էին անսահմանորեն ողորմելի վիճակում... Մի ամբողջ ժողովրդի սարսափելի ողբերգություն: Հազարավոր անպաշտպան

մարդիկ առանց պարենի, առանց մատակարարման ընթանում էին անհայտ նպատակին ընդառաջ: Շատերը մահանում էին ճանապարհին, և նրանց դիակները ընկած էին ճանապարհների եզրերին»[3]:

Եվ իրոք, պանթյուրքիսական ճամբարի այսօրվա կեղծարարները ոչինչ չունեն հակադրելու Հ. Ֆիրբյուխերին և գերադասում են նրան լռության մատնել: Այդպես նրանք վարվեցին նրա «Արևելքի զոհերը» հոդվածի հետ, որտեղ Հ. Ֆիրբյուխերը դեռ 1920 թ. բողոքում էր «մարդկային դժոխքի գաղանությունների դեմ» և վկայում «հայկական վշտի վտակների մասին, որոնք, սկիզբ առնելով Ստամբուլից, Տրապիզոնից, Սիվասից և Էրզրումից, վերածվել էին անլուր տառապանքների մի վիթխարի-սարսափելի սիմֆոնիայի»[4]:

Հայոց եղեռնի աղերսով Հ. Ֆիրբյուխերը աներկբայորեն դնում է Գերմանիայի մեղսակցության հարցը, որը մինչև նա ոչ ոք չէր բարձրացրել, և արդարացիորեն մտրակում գերմանական այն դժբախտ «իրական քաղաքականության» ներքին վիճակը, որի համար նշանակություն ունեին «միայն շոշափելի, միայն թվերով հաշվարկվող առևտրական հաշվեկշիռները, զորամիավորումների և զրահակիրների քանակը, իսկ մարդասիրության պահանջները եթե մեծամիտ ժպիտով մի կողմ չէին էլ նետվում որպես «գաղափարական երազողների ֆանտազիաներ», ապա համարվում էին մի յուրատեսակ զարդարժեք» (էջ 94):

Որպես իսկական դեմոկրատ և սոցիալիստ՝ Հ. Ֆիրբյուխերը, լինելով առաջինը, հարվածը ուղղել էր սեփական թուրքամոլների դեմ, որոնց թուրքամետ պրոպագանդայի հետևանքով Գերմանիայում ամբողջ պատերազմի ընթացքում ժողովուրդը պարզ պատկերացում չուներ հայոց եղեռնի մեջ «Թուրքիայի մասնակցության մասին: Նախշվում և նկարազարդվում էին հեքիաթային պատկերներ: Մեր մամուլը,— գրում է Հ. Ֆիրբյուխերը,— գրող ամբողջ եղբայրակցությունը ջանում էին բոլորին հույս ներշնչել Ալադինի լապտերի կախարդական ազդեցության մասին: Էնվերին դարձրել էին Զիգֆրիդ, Թալեաթին՝ Բիսմարկ, և թուրքերը մեզ հրամցվում էին որպես մի ժողովուրդ, որը աշխարհարարման առաջին իսկ օրից չի ունեցել այլ կրքոտ ցանկություն, քան կռվել գերմանական ժողովրդի կողքին» (էջ 17): Պատռելով գերմանական կեղծ դեմոկրատների՝ Նաումանի, Ռոհրբախի, Էկխի դիմակը, Հ. Ֆիրբյուխերը ցույց էր տալիս, որ իրականում նրանց գովաբանած երիտթուրքերը մարդասպաններ են: «Միայն Ջեմալի հրամանով իրականացրել են այնքան բռնարարքներ, որ դրանց լոկ նկարագրությունը հատորներ կկազմեր»,— գրում էր Հ. Ֆիրբյուխերը (էջ 23):

Հ. Ֆիրբյուխերը բացահայտում է հայոց եղեռնի իրագործման հնարավորության ակունքները: Նա շեշտում էր, որ երիտթուրքական հեղափոխությունը դա վերնախավային շարժում էր և առաջ բերեց սոսկ իշխանության դիկտատուրա: Նրանում բացակայում էր պայքարը գաղափարի համար, և երիտթուրքերը պայքարում էին ոչ թե հանուն ժողովրդի, այլ հանուն առանձին անձանց իշխելու իրատենչ ցանկության, և «մի տիրանի վոխարեն եկավ սրճարանային ինտելիգենտների ու սպաների սարսափազդու իշխանությունը... Դա զուտ նացիոնալիստական իշխանություն էր, որտեղ դռները գոցված էին մյուս ազգերի ներկայացուցիչների առաջ, և այսպիսով նախապես կանխվել էր երկրի բնակչության երկու երրորդի հնարավորությունը ազդելու երկրի պատմության վրա» (էջ 23):

---

3 Նույն տեղում, էջ 70-71 (այսուհետև գրքից բերվող մեջբերումների էջերը կնշվեն տեքստում, փակագծերի մեջ):

4 H. V i e r b u c h e r. Opfer des Orients.— Vorwarts, 37 Jg., N 61,10 August 1920 (Abend-Ausgabe).

Հ. Ֆիրբյուխերը գտնում էր, որ հայոց եղեռնի իրագործման հնարավորությունը չի կարելի հասկանալ, եթե հետադարձ հայացք չձգվի թուրքական կայսրության զարգացման պատմության վրա: Պատմական փաստերի ներկայացմամբ, Հ. Ֆիրբյուխերը ցույց էր տալիս, որ հայոց ցեղասպանությունը հնարավոր էր հենց թուրքական կայսրության պայմաններում, կայսրություն, որը իր սարսափներով և հանցագործություններով համաշխարհային պատմության մեջ չուներ իր նմանակը. «Բռնություն, բռնություն և դարձյալ բռնություն,- ահա թուրքական պատմության նշանարանը: Չի՞ կարելի արդյոք նույնը ասել նաև մյուս ժողովուրդների պատմության վերաբերյալ: Հարկավ, կարելի է, բայց աշխարհի և ոչ մի երկրում քայքայիչ ուժը այդչափ բացահայտ չի գործել, սուրը այդչափ չի ճզմել ժողովրդի հոգեոր, ստեղծագործ ուժերին, ինչպես Թուրքիայում: 200 մեծ վեզիրներից 76-ը մահացել են ոչ բնական մահով:

Այն օրվանից, երբ Զինգիզ խանի հորդան, իր առջևից քշելով Սուլեյմանի թուրքական փոքրիկ ոհմակը հարկադրեց նրանց հանգրվանել Անատոլիայում, թուրքերը իրենց ապրուստը վաստակում էին միայն սրով: Նրանք դարձան սելջուկների վարձկանները, շուտով գրավեցին նրանց պետությունը, քանդեցին հիասքանչ կառույցները... 1632 թ. թուրքերը կողոպտեցին ֆրանսիական նավը: Ֆրանսիական դեսպանորդը իր թարգմանչի միջոցով բողոք հայտնեց սուլթանին: Եվ ի՞նչ արեց սուլթանը: Մուրադ IV-ը, որը հայտնի է որպես լավագույն սուլթաններից մեկը, հրամայեց անմիջապես դժբախտ դեսպանորդին նստեցնել ցցի վրա... Դեռևս հարյուր տարի առաջ հունական ազատագրական պայքարի ժամանակ, նրանք (թուրքական իշխանությունները – Վ. Մ.) հրամայեցին Խիոս կղզում և Պերայում սրի քաշել 50.000 տղամարդկանց, կանանց և երեխաների, իսկ 50.000 էլ վաճառեցին ստրկության: Դելակրուան այդ իրադարձությունները պատկերել է կտավի վրա, որը գտնվում է Լուվրում: Վերջին տասնամյակներին հայերի կոտորածները գնալով ավելի հաճախ և սարսափելի էին դառնում: Մեր ժամանակներում Աբդուլ-Համիդի կատարած սարսափելի դործողությունների մասին արդեն որոշ բան ասվել է: Բայց թուրքական պատմության մեջ կատարված բոլոր գազանությունների դագաթնակետը 1915 թ. Կովկասում (Արևմտյան Հայաստանում – Վ. Մ.) կատարված զանգվածային կոտորածն է» (էջ 25, 31):

Թուրքական պատմությամբ հայոց եղեռնի իրագործման համար ստեղծված բարենպաստ մթնոլորտի բացահայտումը ինքնանպատակ չէր: Հ. Ֆիրբյուխերը մոռացության չէր տալիս նաև թուրք ժողովրդին՝ որպես եղեռնը իրագործող հիմնական գործոնի: «Թուրք ժողովուրդը լայն իմաստով ոչ կուլտուրական ժողովուրդ է... Թուրքական գրականության մասին խոսք իսկ լինել չի կարող... Թուրքերը երբեք չեն ունեցել իրենց ճարտարապետությունը... Գիտության համար թուրքական հողում տեղ չկա... Բայց Թուրքիան պատերազմ վարելու, պատերազմի և կրկին պատերազմի վարպետ է: Պատերազմների թվով Թուրքիան աշխարհում նվաճել է առաջնության դափնին: Էֆենդիները ակտիվորեն գործել են այնտեղ, որտեղ կշռանժարի վրա գրված են եղել բռունցքը, սարսափը, քանդելու ծարավը, բայց ոչ երբեք խելքն ու գաղափարները: Ամոթ Գերմանիային, որ գարձել էր մազերը եվրոպաձև կնտած հանցագործների բանգայի դաշնակիցը, որոնք հենց միայն սպասում էին հարմար պահի, որպեսզի իրագործեին համաշխարհային պատմության մեջ ամենամեծ կողոպուտը և մասսայական մարդասպանությունները» (էջ 31): Մենք հատուկ ընդգծեցինք մեծ հումանիստ Հ. Ֆիրբյուխերի այս խոսքերը ցույց տալու համար, որ, իրոք, հայասեր գերմանացիներից ոչ ոք այդպես անարգանքի սյունին չի գամել սեփական կառավարությանը, ինչպես նա:

Հ. Ֆիրբյուխերը իսկական գերմանացի-պատրիոտ է, և հենց այդ պատճառով էլ նա չի խնայում նաև «սեփական» բռնակալներին, որպեսզի

հանուն արդարության հաղթանակի իր ժողովրդին ևս ազատագրի «թագակիր տականքներից»: Նրա իրավացի պնդմամբ ամեն մի ժողովուրդ էլ ունի «իր թագակիր տականքները», բայց «օսմանների մոտ կարելի է գտնել իշխանության գլխին կանգնած և ժողովրդի դեմ հրահրված մի ամբողջ շարք խելագարներ, հանցագործներ և անառակներ» (էջ 29):

Հիմնովին իրազեկված մարդու իրավունքով Հ. Ֆիրբյուխերը մերկացնում էր Թուրքիայի նկատմամբ կայզերական Գերմանիայի վարած քաղաքականության կարճատեսությունն ու անհեռատեսությունը, ցույց տալով, որ բոլոր կողմերով երիտթուրքերը նույն մարդասպան «հին թուրքերի ժառանգորդներն են»: Հարկավ, ճիշտ էր Հ. Ֆիրբյուխերը, երբ պնդում էր, թե պաաերազմի ժամանակ Թուրքիայում ապրող ոչ բոլոր գերմանացիներն էին թուրքոֆիլ դարձել: Այս աղերսով նա նկատում էր, թե «բավական էր զննել էֆենդու կեղծավոր դիմակը, լսել այն, թե ինչ էին խոսում մարդիկ, տեսնել, թե ինչպես էին մեզ խաբում և կողոպտում ամեն մի քայլափոխի՝ հասկանալու համար, որ մենք պարոնայք Թալեաթի և Էնվերի համար եղել ենք սոսկ իրենց և իրենց կլիկի հաշվենկատ նպատակին հասնելու միջոց» (էջ30):

Հ. Ֆիրբյուխերը անկեղծորեն ափսոսանք էր հայտնում, որ երիտթուրքերի երեսապաշտ դեմքը չէին նկատել նաև հայ գործիչները, որոնք պետք է, որ գերմանացիներից ավելի լավ ճանաչեին նրանց: Այս հարցի շիտակ քննությունը թողնելով հետագայի, չենք կարող, սակայն, այս առիթով չբերել երևույթին տված Հ. Ֆիրբյուխերի հստակ գնահատականը. «երբ այսօր հետադարձ հայացք ես ձգում և վերլուծում այն դեպքերը, ապա հայ գործիչները թվում են այն մարդկանց հանդեպ տածած նվիրվածության և հավատի զոհեր, որոնք շուտով ցույց տվեցին իրենց իսկական դեմքը... Երիտթուրքերը ունեին հատուկ նպատակներ: Եվ նրանք ձեռնամուխ եղան գործի: Նրանք 1915 թ. սառնասրտորեն սպանեցին իրենց հայ բարեկամներին, որոնք 1909 թ. փրկել էին նրանց կյանքը» (էջ 42):

Հ. Ֆիրբյուխերը թողել է հայոց ցեղասպանության սահմռկեցուցիչ իրադարձությունների իրապատում նկարագրությունը: Անժխտելի փաստերի հիման վրա, նաև փաստաթղթերի օգտագործմամբ, Հ. Ֆիրբյուխերը ապացուցում է, որ հայոց ցեղասպանությունը Թուրքիայում պետական մակարդակով կազմակերպված, երիտթուրքական կառավարության հրամանով իրականացված միջոցառում էր: «1915 թ. ապրիլի 21-ին, — հավաստում է Հ. Ֆիրբյուխերը, — թուրքական կառավարությունը հրաման արձակեց հայ ժողովրդի ընաջնջման մասին և համապատասխան հրամաններ ստացան զինվորական և քաղաքացիական գերատեսչությունները՝ Թալեաթն ու Էնվերը հաղթանակ տարան վեհերոտ մեծ վեզիրի՝ եդիպտական արքայազն Սեիդ Հալիլի նկատմամբ» (էջ 50):

Հ. Ֆիրբյուխերի պատկերավոր դիտարկմամբ՝ ապրիլյան չարագուշակ հրամանից հետո «հայոց արյան առվակները սկսեցին հոսել ժայռերով մեկ և խառնվեցին բուռն ալիքների հետ»: Բայց սարսափի փոթորիկը «չանցավ սոսկ Ատամբուլի պերճ այգիների ճոխ սեղանների վրայով, որտեղ գերմանացի և թուրք դաշնակիցները խմում էին մեկը մյուսի կենացը»: Հ. Ֆիրբյուխերի խստագույն դիտարկմամբ չգտնվեց գերմանացի և ոչ մի պետական գործիչ, «որպեսզի Բոսֆորի իր գործընկերների երեսին շպրտեր, թե նրանք չարագործ ճիվաղներ են, որոնց հարկավոր է շղթայակապել»: Միաժամանակ Հ. Ֆիրբյուխերը հեգնորեն նշում է, թե այդ ճիվաղների «խիղճը հանգիստ էր», քանի որ նրանց թիկունքում գերմանական կառավարությունն էր, որի մասին Հ. Ֆիրբյուխերի դատավճիռը անողոք է ու մեկին. «բոլոր հիմարություններին և հանցագործություններին զուգընթաց, որ կատարել են Վիլհելմ II-ը, գիվանագիտությունը և զինվորական ղեկավարությունը, վիթխարի պատերազմին զուգընթաց, որ իրենց

վրա էին բեռնել գերմանացի Հերոստրատները, գերմանական ռազմական կառավարությունը կիսում է նաև պատասխանատվությունը 1915 թվականի ստոր հանցագործության համար» (էջ 75-76):

Հենց այդպես անկեղծ և ուղղակի Հ. Ֆիրբյուխերը մեղադրում էր սեփական կառավարությանը, մի եզրակացություն, որը չէր համարձակվել անել անգամ մեծ հայասեր և հումանիստ Լեպսիուսը, մինչդեռ Հ. Ֆիրբյուխերը դա անում էր այն էլ վերահաս ֆաշիստական վտանգին ընդառաջ, վտանգ, որի զոհը 1939 թ. դարձավ նաև ինքը:

ՀԱՅՆՐԻԽ ՖԻՐԲՅՈՒԽԵՐ

*ՍԱՏԱՆԱՅԻ ԿԻՐՃԸ**

Տրապիզոնի և Էրզրումի վիլայեթներից բռնագաղթեցված հայերին Եփրատի հովտով քշեցին մինչև Կամախի (Քեմախի) կիրճը: Դա լեռներում ընկած անդնդախոր, ուղղաձիգ մի կանյոն է, ուր դեռը վերածվում է ալեկոծ խառնարանի: Այն, ինչ այստեղ կատարվեց հազարավոր մարդկանց հետ, իրենից ներկայացնում է դաժանության և վայրենության այնպիսի մի պատկեր, որ, թվում է, թե դարձյալ ի մի է կուտակվել հազարամյակների խելահեզությունը և բարձրացել այս մի կտոր անիծյալ հողի վրա, որպեսզի վիթխարի մի հրեշի կերպարանքով հաղթականորեն ըզավի հունիսյան առկայծող արևին ի տես, թե ողջ քաղաքակրթությունը դա սոսկ միայն շղարշ է, որը ամեն օր կարող է պատռվել երկոտանի ճիվաղի դաժանությամբ:

Գրող Ֆ. Ռ. Նորդը իր «Սիրանույշ» վեպում (գերմանական հրատարակությունը Շտուտգարտ) տվել է Կամախում կատարված գազանությունների պատկերը, որը ավելի շուտ կարելի է համարել գրողի հրեշավոր երևակայության անիմաստ պտուղ, քան թե իրական դեպքերի պատկերում: Է. Ա. Պոյի և Ե. Տ. Հոֆմանի նկարագրած սարսափները նսեմանում են այն բանի առաջ, ինչ տեղի ունեցավ Վիլհելմ II-ի դաշնակիցների մոտ 1915 թ.:

Հունիսի 8-ին, 9-ին և 10-ին հայ զանգվածները թողեցին Երզնկան՝ զինվորական պահակազորի ուղեկցությամբ, որը պետք է ապահովեր այն փոխադրամիջոցի ապահովությունը, որ կազմված էր հետիոտն մարդկանցից և եզների հարյուրավոր սայլերից: Նրանք ընթանում էին դեպի Կամախ՝ հաջորդ օկրուգային քաղաքը: Տասնյակ հազարավոր աքսորյալ հայերի միայն աննշան մասը հասավ նշանակման վայրը: Անպաշտպան մարդիկ կիրճում ենթարկվեցին զինվորների և արյունարբու քրդերի հարձակմանը, կողոպտվեցին, ապա սրի քաշվեցին արյունահեղ գրոհի ժամանակ: Խրխնջացող ճիվաղների վայրենի գոռում-գոչյունի տակ բացատարած անդունդն էին նետում կիսամեռ մարդկանց և դիակների կույտեր: Ջարդուփշուր արված մարդկային մարմինների շառաչը կրկին ու կրկին արձագանքվում էր միախառնվելով վերևում մահասկզբի հոգեվարքի մեջ գալարվող խելակորույս տնքոցներին: Տղամարդկանց և կանանց աչքի առաջ անդամահատում և կտոր-կտոր էին անում նրանց երեխաներին և մերձավորներին, նրանց արյունաքամվող մարմինները ջարդուփշուր էին անում ժայռերի ելուստներին խփելով: Դժոխքի ուրվականի առաջ խելքը կորցրած մայրերն ու կանայք իրենց երեխաների ու ամուսինների հետևից նետվում էին մահվան անդունդը: Հուսահատված մարդկային էակները

---

* *Հատված Հ. Ֆիրբյուխերի "Armenien 1915" գրքից (էջ 56-60):*

արյան մեջ թրջված ճիվաղների առաջ ծնկաչոք էին գալիս և աղոթում որքան կարելի է շուտ սպանել իրենց: Ուրիշները կարեկցություն էին աղերսում կամ իրենք էին իրենց երեխաներին նետում գետը, որի առափնյա ելուստների մոտ դիակները պատնեշներ էին առաջացրել: Վայր ընկնող մեռյալ մարմինները մխրճվում էին արագընթաց ալիքների մեջ: Եվ դժոխային այդ աշխատանքը տևեց ոչ թե մեկ, ոչ թե երկու ժամ, այլ՝ երեք օր անընդմեջ: Մարդկանց խեղդամահ անելն ու մորթոտելը շարունակվեց երեք օր անընդհատ: Արյան առվակները դանդաղ հոսում էին ժայռերն ի վար և խառնվում մոլեգին ալիքներին: Երեք օր... Եվ արևի խավարում տեղի չունեցավ, և սարսափի փոթորիկը չանցավ սոսկ Ստամբուլի ճոխ այգիների սեղանների վրայով, որտեղ գերմանացի և թուրք դաշնակիցները խմում էին մեկը մյուսի կենացը. մշտամնա հաճախորդների սեղանի շուրջը, որտեղ ֆիլիստերների երևակայության մեջ ուրվագծվում էին արևելյան թովիչ պատկերներ, նրանց ալկոհոլային կեղծ երազանքը չէր ցրում սպանված երեխայի հոգեվարքի ճիչը: Մի՞թե գերմանական ոչ մի պետական գործիչ չէր կասկածում, որ ինչ-որ բան այնպես չէ, որպեսզի Բոսֆորի իր գործընկերների երեսին չպրտեր, թե նրանք չարագործ ճիվաղներ են, որոնց հարկավոր է շղթայակապել: Նրանց խիղճը հանգիստ էր: Վիլհելմ II-ի դեսպանը մայիսի 31-ին զեկուցում էր Բեռլին, թե «նշված ձեռնարկումները (հայերի ցեղասպանությունը – Վ. Մ.) Թուրքիայում տիրող քաղաքական և ռազմական դրության պայմաններում, ցավոք սրտի, անհնարին է կանխել»: Հիանալի մի բառ է այդ «ցավոք սրտին»:

Երեք օր: Եփրատի կուլ տված մարդկանց իրեղենները տարան անտեր մնացած սայլերով: Եվ միայն չորրորդ օրը Կամախ ուղարկվեց 86-րդ հեծելազորային ջոկատը «պատժելու համար» արյունարբու քրդերին: Այդ «ազնվաբարո» ջոկատը եզրափակեց արյունոտ աշխատանքը՝ սրի քաշելով այն միքանիսին, որոնք դեռ կենդանի էին մնացել: Սարալանջերն ու ժայռերը ծածկվել էին ուռչած դիակներով, որոնք օդում տարածել էին գարշահոտություն: Երզնկայից եկած երկու բուժքույր պատմում էին մի ժանդարմի մասին, որը պարծենում էր, թե ամեն օր սպանում էր տաստասներկու տղամարդկանց և նետում գետը: Այն երեխաներին, որոնք չէին կարող փախչել, փշրում էին գանգերը: Ճանապարհին ընկած գյուղերում կանանց կրկին բռնաբարում էին: Այնուհետև ասվում էր.

«Հաջորդ օրը, վաղորդյան, մենք լսեցինք մահվան դատապարտվածների աղմուկ-աղաղակը... Աննկարագրելի մի վայնասուն: Դա մարդկանց մի մեծ հոտ էր: Շատերը գոռգոռում էին՝ «փրկեցեք մեզ, մենք ուզում են մահմեդական դառնալ կամ գերմանացի, որը կամենաք, միայն թե փրկեցեք մեզ: Այժմ նրանք մեզ կքշեն Կամախ և կկտրեն մեր գլուխները...»: Քաղաքին մոտենալիս մենք տեսանք, թե ինչպես շատ թուրքեր սլանում էին ձիերով և որսում երեխաներ ու երիտասարդ աղջիկներ: Քաղաքի մուտքի մոտ, որտեղ գտնվում էին նաև գերմանացի բժիշկների բնակարանները, հոտը, նախքան դեպի Կամախ շարժվելը, մի ակնթարթ կանգնեց: Այստեղ ստրուկների իսկական մի շուկա էր, միայն լոկ այն տարբերությամբ, որ նրանց դիմաց ոչինչ չէին վճարում: Մայրերը կամովին հանձնում էին իրենց երեխաներին, և ոչ մի դիմադրություն չէր կարող լինել»:

Երբ հունիսի 21-ին գթության քույրերը թողել էին Երզնկան, ճանապարհին նրանք տեսել էին աքսորվածների բազում տառապանքները: Բռնագաղթեցվածները լռակյաց առաջ էին գնում, մեծերն ու փոքրերը, անգամ զառամյալ պառավները, որոնք իրենց հազիվ էին պահում ավանակների վրա, գնում էին, որպեսզի հետո, մեկը մյուսին կապված, բարձր ժայռերից նետված լինեն Եփրատի ալիքների մեջ, անեծքի այն հովտում, որը կոչվում է Քեմախ-Բողազի: Մի հույն կառապան մեզ պատմեց, թե

ինչպես էին դա անում: Մարդու սիրտը սառույց էր կտրում նրա պատմածից: Մեր ժանդարմը պատմում էր, որ նա ինքը 3000 կանանցից և երեխաներից կազմված այդպիսի քարավաններից մեկը Մամախաթունից բերել է Կամախ: «Her gitdi bitdi - բոլորին ոչնչացրինք»,- ասաց նա: Մենք հարցրեցինք՝ «եթե դուք ուզում էիք նրանց սպանել, ինչո՞ւ դա չեք արել դյուզերում: Էլ ինչո՞ւ նախապես նրանց հասցրել եք այդպիսի աննկարագրելի ստորացուցիչ վիճակի»: «Այդ դեպքում ի՞նչ պիտի անեինք դիակների հետ, նրանք դարշահոտություն կտարածեին»,- եղավ նրա պատասխանը:*

Մի պահ կանգ առնենք: Հազար տարի առաջ բուլղարասպան Վասիլ II-ը հրամայեց 15000 մարդկանց աչքերը հանել: Հարյուր հիսուն մարդու թողեցին մեկ աչքը, որպեսզի նրանք կարողանան իրենց լիովին անօգնական եղբայրներին վերադարձնել բուլղարական ցար Սիմեոնի մոտ: Ասում են, թե 978 թ. ռուս իշխան Սվյատոսլավը հրամայել է 40.000 մարդկանց Ադրիանոպոլսի մոտ քաշել ցցի վրա: Սպարտակի հազարավոր ապստամբների գամել էին խաչի: Տիտոսը սարսափելի վայրագություններ արեց Երուսաղեմում: Գերմանական կոմսերը դաժան վրեժ լուծեցին պարտված գյուղացիներից Ֆրանկենհաուզենի արյունոտ դաշտում: Բայց դրանք աեղի էին ունեցել 2000, 1000, 400 տարի առաջ: Դա հաղթողի կողմից վրեժի լուծում էր պարտվածից, դա հաշվեհարդար էր դաժան պատերազմի ժամանակ: Եթե հաղթեր մյուս կողմը, թերևս նա ևս այդպես կվարվեր: Դրանք պատերազմական ժամանակներ էին, երբ մարդը «ինչ-որ մի բան արժեր», թեև արժեր այնքան, որպեսզի դառնար մարդասպան կամ սպանվեր: Մարդը պատերազմի ծառան էր, զինվորը, հպատակը, հայրենիքի պաշտպանը՝ մարդ էր: Բայց մի ամբողջ ժողովրդի ոչնչացումը՝ դիտակցաբար, կանանց ու երեխաներին սրի քաշելով հանդերձ, այդպիսի բարձունքի բարբարոս անցյալը թերևս նույնիսկ չէր էլ «հասունացել»: Պետք է հիշել Պերուում Պիցարոյի կատարած չարագործությունները, սպիտակների մահաշունչ պատերազմը կարմրամորթների դեմ, «քրիստոնյա» անգլիացիների կատարած «մարդաորսը» Տասմանիայում, Նոր Զելանդիայում, նրանց բարբարոսությունները անգլո-բուրական պատերազմում, հերերներին գերմանացիների կողմից հետապնդելու ժամանակ ծարավով սպանելը, որպեսզի կարելի լինի պատկերացնել, թե ինչ է կատարվել Կամախում 1915 թ.: Շարունակվում են փորձեր կատարվել դա բացատրելու արյունարբության ընչաքաղցության, կրոնական ատելության, իշխանատենչության և հիմարության գործոններով: Եվ, այնուհանդերձ, այնքան շատ է անըմբռնելին, որ թվում է 1915 թ. ողբերգությունը մարդկության պատմության ամենաարյունալի և սահմռկեցուցիչ հանելուկն է: Առվորական խելքի համար այն մնում է որպես անլուծելի խնդիր, և հենց դա է անտանելին:

---

* *Այդպես է տեքստում:*